ւերակներ), Ալաքալըկ (կարմրախայտ), Նիխալս, Քեսուկ–Քէօփրի *եւ* Սիվրի–չայ *տու–րը, որոնք բոլորն էլ ոռոգում են համա–*

զարդարել են կենդանութեան ժամանակ մեռնողների կատարած արշաւանքները։ Գերեզմանաքարերը լեզու առած ասում են, թէ այնտեղ հանգստացողն եղել է ժամանակին որսորդ, հալածել է բարակներով եղջերուներին եւ որսացել կամ բազէներով կաքաւներ է բռնել։ Ամէն քարի վրայ խորհրդանիշ կայ, որոնք ասում են թէ, այդ տեղ պառկողն եղել է գերձակ, կամ դարբին, հիւսն կամ ջուլհակ։ Գերեզմանոցը հեթանոսական դարից սկսուած եւ շարունակուած է երկար դարեր, ամենեւեն չի նմանիր Ջուղայի մեծ գերեզմանոցին, ուր Մեսրոպեան տառերով դրոշմուած են յատուկ անունները, տոհմերը եւ արհեստները. սակայն արհեստաւորները այստեղ ցոյց են տուել մեծ ինքնուրոյնութիւն, ինչպէս որ Ջուղայի 30.000 քար արձանների քանդակների շրջանակները իրարից տարբեր են նկարների կազմուածքով, այստեղի 10.000-ի չափ ուղղահայեաց եւ 3 մետր բարձրութեամբ տնկուած քարերից եւ ոչ մէկի շրջանակը նման չէ միւսին։ Ո՛չ մի վարպետ չի ուզեցել ընդօրինակել, այլ ամէնքը ջանել են հեղինակել եւ իրենց խաղմզոցներով այնպիսի ծաղիկներ բանել, որ գերազանցեն նախորդներին։ Ամենագլխաւորն այստեղ այդ գծերի հիւսուածքն է, որոնք կազմում են բազմազան այնպիսի թլիփներ (bordure), որ Մաւրիտանական կոչուած որմաքանդակների եւ թլիփների բնատիպերն այստեղ կարող են գտնել գեղարուեստագէտները։ Այս գերեզմանոցը գտնւում է Իդի եւ Նարիմանի, Վէկչիձորի եւ Արիստիսի գեղերի մէջ։

Բայց միայն թլիփներով չեն նշանաւոր այս շիրիմները, այլ ամէն մի շիրմի ճակատին հաստատուած է մի սպինքս, զանազան կենդանիների՝ — եզի, առիւծի, գոմէշի, մարդու, կանացի, արծուի, ցլի, ձիու գլխով եւ այլ, եւ այլ բարդ կազմերով, մասամբ նման Ջուղայի գերեզմաննոցի շիրիմների ճակատներին, ուր կենդանիների խառնուրդից նկատելի են երրորդութեան անվերջ կազմուածքներ, ամէն մի քարի վրայ նկատելի է Ահուրամազդայի, Անահիտի եւ Միհրի երեւոյթներից որեւէ պատկեր, ամէն քարի վրայ